ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«20» 03 2024թ.
No 4-3/17410-2024

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ,
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ՝
ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
ԷԼ.ՀԱՍՑԵ՝ annya.sarkisova@gmail.com

Ի պատասխան Ձեր 11.03.2024թ-ի գրության

Հարգելի պարոն Բաղդասարյան

Գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1-ին հարցի վերաբերյալ.

29.05.2014թ. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության անդամ պետությունների Մաքսային միության շրջանակներում *գործում է ապրանքների ներքին շուկա և իրականացվում է ապրանքների ազատ տեղափոխում անդամ պետությունների տարածքներով՝ առանց մաքսային հայտարարագրման ու պետական հսկողության (տրանսպորտային, սանիտարական, անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական) կիրառման:*

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) ապրանքների նկարագրման և ծածկագրման համակարգ է, որն օգտագործվում է ապրանքների դասակարգման համար՝ մաքսասակագնային կարգավորման միջոցներ, արտահանման մաքսատուրքեր, արգելքներ ու սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանական միջոցներ կիրառելու, մաքսային վիճակագրություն վարելու նպատակներով:

«Ռեդուկսին» ապրանքատեսակը ՌԴ արտադրանք է: ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում Միության անդամ չհանդիսացող երկրներից նշված արտադրանքի ներմուծման

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գործարքներ չեն հայտնաբերվել, հետևաբար ենթադրվում է, որ խնդրո առարկա ապրանքը ՀՀ տարածք ներմուծվել է Միության անդամ երկրներից:

ՀՀ կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 202-Ն որոշման՝ 73-րդ կետի համաձայն՝ Միության անդամ երկրից Հայաստանի Հանրապետություն դեղագործական արտադրանք ներմուծելիս՝ արտադրանքը Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելուց հետո ներմուծողը 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է լիազոր մարմնին՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ներմուծման (համապատասխանության) հավաստագիր ստանալու նպատակով: Ներմուծողը Միության անդամ երկրից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դեղագործական արտադրանքը տեղափոխում է իր պահեստ և չի իրացնում, բաշխում, բացթողում կամ կիրառում՝ մինչև ներմուծման (համապատասխանության) հավաստագիր ստանալը և սերիայի բացթողում իրականացնելը: ՀՀ ՊԵԿ մաքսային մարմնի կողմից Միության անդամ երկրներից ներմուծվող բժշկական արտադրատեսակների նկատմամբ հսկողությունն ավարտվում է բեռը բաց թողնելու պահից:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ Միության անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող դեղագործական արտադրանքի նկատմամբ մաքսային մարմինների կողմից հսկողությունն իրականացվում է ինչպես մինչև ապրանքները բաց թողնելը, այնպես էլ բաց թողնելուց հետո՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված մաքսային հսկողության ներքո գտնվելու ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ խնդրո առարկա հարցը դուրս է ՀՀ ՊԵԿ իրավասություններից՝ առաջարկում ենք բարձրացված հարցի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:

2-րդ հարցի վերաբերյալ.

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար նախատեսված է պատասխանատվություն ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով, իսկ ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնները չպահպանելու համար նախատեսված է պատասխանատվություն ՀՀ հարկային օրենսգրքի

424-րդ հոդվածով: Նշված խախտումները արձանագրվում են հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր հարկային ստուգման, թեմատիկ հարկային ստուգումների (հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում և ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության ստուգում) կամ հսկիչ գնման ուսումնասիրության ժամանակ՝ օրենսգրքով սահմանված կարգով:

Ընդ որում, վերը նշված հսկողական գործողությունները հարկային մարմնում իրականացվում են նաև 3-րդ անձանցից ստացված տեղեկատության հիման վրա: Հետևաբար, Ձեր կողմից ներկայացված փաստերը կուսումնասիրվեն հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանումների կողմից և կտրվի համապատասխան ընթացք: Միաժամանակ, շնորհակալ ենք համագործակցելու համար:

3-րդ հարցի վերաբերյալ.

Ինչ վերաբերում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից դեղերի ներմուծման և իրացման վերաբերյալ տվյալների ստացմանը, ապա տեղեկացնում ենք, որ տեսչական մարմինը պարբերաբար ըստ անհրաժեշտության դիմում է ՀՀ պետական եկամուտների կոմիտե իրացված դեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԶԱՌԱ ՄԵԼՔՈՒՄՈՎԱ

3/20/2024

X Z. Melq

Signed by: MELKUMOVA ZARA 5702810120

ՔԱՐՏՈՒԱՐՈՒԹՅՈՒՆ 7

Կատարող՝ Ընթացիկ հարկային եկամուտների հաշվառման բաժին,
Անի Մելքոնյան, Հեռ. 010304009, 010304098